

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված  
ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման  
աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքը (Արտաբույնք բնակավայրը) ներառող  
միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի  
փոփոխության վերաբերյալ  
(Եղեգիս համայնքի (Արտաբույնք բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման  
13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.



1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝  
ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքը (Արտաբույնք բնակավայրը) ներառող  
միկրոռեգիոնալ մակարդակի Վայոց ձոր-5 համակցված տարածական պլանավորման  
փաստաթղթի փոփոխությանը՝

|   |  |
|---|--|
| ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի<br>(Արտաբույնք բնակավայրի)<br>Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն,<br>առկա նպատակային և գործառնական<br>նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և<br>գործառնական նշանակությունը  |
| 10-010-0120-0047 կադաստրային ծածկագրով<br>0.64843 հա մակերեսով հողամասից 0.116 հա<br>մակերեսով գյուղատնտեսական նպատակային<br>նշանակության այլ հողատեսք        | 10-010-0120-0047 կադաստրային ծածկագրով 0.64843<br>հա մակերեսով հողամասից 0.116 հա մակերեսով<br>բնակավայրերի նպատակային նշանակության<br>հասարակական կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել  
ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին  
համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՀՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն.  
քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական  
նորմերի պահանջները:

3. Եղեգիս համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն  
արտացոլել Արտաբույնք բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

|  |  |              |
|--|--|--------------|
| Հանձնաժողովի նախագահ՝ Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող |  |              |
|  |  | Դ. Գրիգորյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝  |  |              |
|  |  | Հ. Գալթյան   |

Երևան, «26» «հունվարի» 2024 թ.